ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲՈՂՈՋՅԱՆ ՍՈՍԵ ՓԱՐԹՈՒՂԻ

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ 17-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Ժ.01.01- «ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՎ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ **Սաֆարյան Վազգեն Հմայակի**
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Մուրադյան Սամվել Պարգևի**
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Որսկանյան Հերիքնազ Վանիկի
բանասիրական գիտությունների թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. մայիսի 15-ին՝ ժամը 14[30]-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Գրականագիտություն 012» մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52[ա], ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի ապրիլի 11-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայ գրականության և մշակույթի պատմության մեջ Նոր Ջուղայի թողած ավանդները անհերքելի են: Գրականագիտությունը, բացառությանբ առանձին դեպքերի, թերևս պատշաճ ուշադրության չի արժանացրել նորջուղայեցի հեղինակներին ու գործիչներին, մինչդեռ այս գաղթօջախի վերածննդի փորձը օրինակելի է նոր ժամանակներում ինչպես սփյուռքի, այնպես էլ Հայաստանի համար:

Մեր հետազոտությունների ընթացքում պարզ դարձավ, որ նորջուղայեցի հեղինակների մեծ մասը գրականագիտության մեջ ըստ արժանվույն չի ուսումնասիրվել՝ որոշ դեպքերում բացարձակապես մնալով անհայտության մեջ: Այդպիսիք են, օրինակ, Կոստանդ Ջուղայեցին, Ստեփանոս Դաշտեցին, Ստեփանոս Երեցը, որոնց ստեղծագործությունների ուսումնասիրության բացթողումը թերի է թողել որոշ ժանրերի ձևավորման ու կիրառության պատմությունը ուշ միջնադարի գրականության պատմության մեջ, որոնց բացահայտման և ուսումնասիրության ուղղությամբ մեծ անելիքներ դեռևս կան:

Հնարավոր չէ խոսել հայ աշուղական դպրոցների մասին՝ առանց ճանաչելու պարսակահայ աշուղների և հատկապես Նոր Ջուղայի դպրոցի բերած ավանդները: Բավական է միայն հաշվի առնել նրա աշխարհագրական դիրքը՝ պատկերացում կազմելու, որ այն է արևելյան միջնադարյան գրականության հետ մեզ կապող կամուրջը: Պարսկահայ աշուղների երգերը հարուստ աղբյուր են հայ տաղերգության և բարբառագիտության նորովի ուսումնասիրման համար:

Հիշյալ հեղինակների ու թեմաների հետազոտությունը հարստացնելու է ուշ միջնադարի գրականության պատմության էջերը, իսկ նրանց արծարծած հոգևոր, համամարդկային ու ազգային հարցերի քննությունը ժամանակի տարածությունից վերահաստատելու է հին արժեքների արդիականությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Առաջադրված հիմնահարցի նպատակն է ուսումնասիրել Նոր Ջուղայի՝ 17-18 դարերի գրական ու մշակութային զարթոնքը, ինչպես նաև արժևորել նրա նշանավոր ներկայացուցիչներին և ցույց տալ նրա տեղը հայ գրականության պատմության մեջ: Ուստի մեր խնդիրն է եղել ներկայացնել այս գաղթօջախի հիմնադրման հանգամանքները 17-րդ դարում, բացահայտել հայ կյանքի զարթոնքի գործում ջուղայահայության ստեղծած ավանդները, հետազոտել և գտնել նրա հաջողության գաղտնիքները հայ քաղաքակրթության վերստեղծման, վերածնավորման և մշակման գործում:

Շրջանառված և նորահայտ փաստերի հիման վրա նկարագրել և վերլուծել ենք հիշյալ դարերում պատմական-հասարակական և մշակութային մթնոլորտը՝ դիտարկելով իրանահայ գրչագրության և տպագրության դերը հայկական իրականության մեջ: Ուսումնասիրել ենք նույն շրջանի պարսկահայ, մասնավորապես՝ ջուղայահայ գրականությունը՝ սկսելով Նոր Ջուղայի աշուղական դպրոցից: Նպատակ ենք ունեցել ցույց տալ աշուղական գրականության բովանդակային

շերտերը, ուստի՝ պարսկահայ աշուղներին ներկայացրել ենք ըստ ստեղծագործության մոտիվների:

Թեմայի ընդարձակության մեջ ընտրել ենք պակաս ուսումնասիրված վաճառական-բանաստեղծ Ստեփանոս Դաշտեցուն: Մեր խնդիրն է եղել ներկայացնել Դաշտեցուն որպես բանաստեղծի: Անդրադարձել ենք նաև նրա զրույց-բանավեճերին, որոնք օգնել են բացահայտելու վաճառականական միջավայրի իրականությունը, որի մեջ ապրել և ստեղծագործել է Դաշտեցին:

18-րդ դարի պատմագիր Ստեփանոս Երեցի «Հանգիտագիրքը» մինչև 2017 թվականը եղել է անտիպ և չի արժանացել գրականագիտության ուշադրությանը: Նպատակ ենք ունեցել ներկայացնել այդ պատմությունը և գնահատել այն նաև որպես գեղարվեստական երկ:

Ատենախոսության գիտական նորույթը: Արժևորելով ատենախոսության նյութի տարբեր դրվագների վերաբերյալ առկա աղբյուրները, որոնք օգնել են մեզ ուղղորդվել այս ընդարձակ թեմայի ուսումնասիրության ընթացքում, պետք է նկատենք, սակայն, հետազոտության ենթակա գործերի մասին գրականագիտական աղբյուրների պակասը կամ իսպառ բացակայությունը:

Մեր աշխատանքում ներկայացրել ենք գրական ու մշակութային երևույթները, որոնք ազդակ են եղել Նոր Ջուղայի և նրա գրական-մշակութային կյանքի կայացման համար: Կենտրոնանալով գրական որոշակի երևույթների, հեղինակների ու գործերի վրա՝ նպատակ ենք ունեցել մեկտեղ ներկայացնել աշուղությունը, բանաստեղծությունն ու պատմագրությունը Նոր Ջուղայում, որպեսզի համաժամանակյա և տարժամանակյա մոտեցումներով հնարավոր լինի հավուր պատշաճի գնահատել դրանք:

Կոստանդ Ջուղայեցին հայտնի է որպես մանկավարժ և վաճառական, ով կազմել է դասագիրք՝ վաճառականական մասնագիտական առարկաների վերաբերյալ: Նրա գրքում առկա խրատները և չափածո, ինչպես և անտիպ այլ գործեր ուսումնասիրության նյութ են դարձել մեզ համար. դրանք վերծանել և վերլուծել ենք առաջին գլխում:

Իր չափածո գործերով աչքի է ընկնում վաճառական-բանաստեղծ Ստ. Դաշտեցին, ում ստեղծագործության թեմատիկ, բովանդակային ու ժանրային քննությունը բացահայտում է մի նոր և ինքնատիպ բանաստեղծի, ով կրում է իր ժամանակի մարդու արժեհամակարգը:

Ուշ միջնադարի պատմագրության ավանդները շարունակող հեղինակ է Ստեփանոս Երեցը, որի պատմության՝ որպես գեղարվեստական երկի քննությունն ենք կատարել ատենախոսության երրորդ գլխում:

Աշխատանքի մեթոդաբանությունը: Ուսումնասիրվող թեմայի և աղբյուրների բազմազանությունը առավել անհրաժեշտ է դարձնում ճիշտ մեթոդաբանության մշակումը: Պատմահամեմատական, վերլուծական և համադրական մեթոդների կիրառությամբ բացահայտել ենք Նոր Ջուղայի գրական-մշակութային և հասարակական միջավայրը, որտեղ առկա հանգամանքների տրամաբանությամբ դիտարկել ենք գաղթօջախի ունեցած ներդրումները 17-18-րդ դարերի հայկական

աշխարհում և դրանք վերաիմաստավորել նորօրյա արժեհամակարգում: Համեմատությամբ և պայմանների քննությամբ գնահատել ենք պարսկահայ աշուղների թողած ավանդները: Կատարել ենք ձեռագրագիտական աշխատանք՝ վերծանելով Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով» մատյանում հանդիպած չափածո երգերը: Ընտրված երևույթների և հեղինակների գործերի վերլուծությունը մեզ հնարավորություն է տվել կերտելու 17-18-րդ դարերի Նոր Ջուղայում ստեղծված գրականության և արվեստի համայնապատկերը:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, բառացանկից և գրականության ցանկից, որտեղ նշված են օգտագործված աղբյուրները, պարբերականները, ձեռագիր մատյաններն ու համացանցային հղումները:

Ներածության մեջ ներկայացրել ենք այն ժամանակաշրջանը, որում հիմնադրվել և իր գրական ու մշակութային զարթոնքն է ապրել Նոր Ջուղան: Թեմայի ընդգրկունության մեջ առանձնացրել ու ընդգծել ենք այն շերտերը, որոնք մեզ համար հետազոտության առարկա են դարձել, ապա դիտարկել ենք դրանց ուսումնասիրվածության աստիճանը: Հակիրճ շարադրելով ատենախոսության նպատակներն ու խնդիրները՝ բացատրել ենք թեմայի **արդիականությունը** և ընդգծել գիտական նորույթը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ
1.1. ԳՐՉԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Ատենախոսության առաջին գլխի այս ենթաբաժնում նկարագրել ենք 17-18-րդ դարերի հանրային ու մշակութային կյանքը Նոր Ջուղայում: Ներկայացրել ենք այն հանգամանքները, որոնք 17-րդ դարասկզբին կյանք տվեցին այս գաղթօջախին:

Ջուղայի ժողովուրդն իր վերածնունդն սկսեց իր հետ Պարսկաստան բերած մատյաններից: Արտագրեց, ծաղկեց ու նոր փայլ հաղորդեց մեր գրականությանը՝ հիմք դնելով Նոր Ջուղայի գրչագրության արվեստին: Այդ ժամանակաշրջանում Սբ. Ամենափրկիչ վանքը այնքան է զարգանում գրչության և կազմարարության արհեստում, որ անգամ Սբ. Էջմիածնից գրքերն ուղարկվում էին Նոր Ջուղա՝ կազմելու և կրկին Սբ. Էջմիածին վերադարձնելու նպատակով: Նոր Ջուղայի գրչագրերի թիվը երեք ու քառորդ դարերի ընթացքում հասնում է 744-ի, որոնց մեջ մատյաններից բացի՝ առկա են 44 հմայիլներ, շուրջ 70 պատառիկներ և 118 նոր գրչագրեր:[1]

Զարթոնքի երկրորդ հանգրվանը եղավ Սբ. Ամենափրկիչ վանքում հայկական տպագրության հիմնադրումը, որը առաջինն էր Իրանում և ողջ Միջին Արևելքում: Հռոմում հայկական տպարան հիմնելու ջուղայեցի վաճառականների փորձի ձախողումից հետո 1636 թ. Խաչատուր Կեսարացին իր վանքի ողջ միաբանության

[1] **Մինասեան Լ.** , Գրչութեան արուեստը Նոր Ջուղայում, Նոր Ջուղա, Ս. Ամենափրկիչ վանքի տպարան, 1991, էջ 17-22:

հետ միասին և, հովանավորությամբ Նոր Ջուղայեցի վաճառականների, ձեռնարկեց տպարան հիմնելու գործը. «Ամէնքը մէկ, ձեռք ձեռքի տուած՝ փորագրեցին, ձուլեցին, մելան ու տառ պատրաստեցին, շարեցին, ի չգոյէ իգոյ ածին թուղթը, փորձեր սրբագրեցին, պրակներ խմբեցին»:[2] Խաչատուր Կեսարացու տպագրած առաջին գիրքը («Սաղմոս ի Դաւիթ», 1638 թ.) շուրջ 330 տարի մնացել է անհայտ և գտնվել է միայն 1968 թ. Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում: Ուշարժան է դավանաբանական պայքարի դերը տպագրության գործի հաջողության մեջ:

Կեսարացին մեծ ցանկություն ուներ Նոր Ջուղայում զարգացնել հայ տպագրությունը, ուստի 1639 թ. Եվրոպա է ուղարկում իր աշակերտներից մեկին՝ Հովհաննես Ջուղայեցուն[3], որպեսզի նա այնտեղ ուսումնասիրի տպագրական գործը, նոր տառեր ձուլել տա և տպագրական անհրաժեշտ պարագաներով վերադառնա. «. . . որպէսզի ուսեալ ի նոցանէ եւ եկեալ ուղղեսցէ եւ հաստատեսցէ զատ ի մէջ Հայաստանեաց» (Հիշատակարան «Ատենի Ժամագիրք»-ի):[4] Սակայն մինչև նրա վերադարձը վախճանվում է Կեսարացին՝ նրան թողնելով առանց հովանավորի: 1688 թվականից հետո անգործության է մատնվում մամուլը՝ փակելով հնատիպ գրքի շրջանը Նոր Ջուղայում[5]:

1. 2. ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԴՊՐՈՑԸ ԵՎ ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԴԱՍԱԳԻՐՔ ՄԱՏՅԱՆԸ

Նոր Ջուղայի հասարակական-մշակութային կյանքի կենտրոնը Սբ. Ամենափրկիչ վանքն էր և նրա կրթօջախը՝ վանքի դպրոցը, որտեղ կրթություն ստացան հոգևորականներ, ինչպես նաև՝ հայ գրականության, փիլիսոփայության ու մշակույթի գործիչներ:

Կրթության և հոգևոր դաստիարակության առանցքային դերից բացի Վանքի դպրոցը կենտրոնական տեղ էր զբաղեցնում նաև վաճառականության ու համաշխարհային առևտրի բնագավառում հայ վաճառականներին կրթող համակարգում, որտեղ մրցակցում էր կաթոլիկ քարոզիչների ուսումնական հաստատությունների ու առտնին վաճառականներ կրթողների հետ[6]:

---

[2] **Թէոդիկ**, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, Վ. և Հ. Տէր-Ներսէսեան հրատ., 1901, էջ 160:

[3] Յովհաննէս վարդապետ Ջուղայեցի (Քթռէշէնց). Ոսկան Երևանցու օգնական Թէոդորոս Քթռէշենցի եղբայրն է: Չպետք է շփոթել Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցու հետ:

[4] **Մինասեան Լ.** , Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը, Նոր Ջուղա, Ս. Ամենափրկիչ վանքի տպարան, 1972, էջ 37:

[5] Խաչատուր վրդ. Կեսարացու և Հովհաննես վրդ. Ջուղայեցու տպարաններին պատկանող իրերը դարերի կողոպուտների ու աղետների հետևանքով անհետացել են գրեթե ամբողջությամբ: Պահպանվել են միայն Հովհաննես վարդապետի պատրաստած երկու տպատախտակներ:

[6] Ջուղայեցիներն առևտրական կրթություն ստանալու երեք ճանապարհ ունեին՝ Սբ. Ամենափրկիչ Վանքի դպրոցը, կաթոլիկ քարոզիչների ուսումնական հաստատություններն ու առտնին կրթությունը: (Տե՛ս Կոստանդ Ջուղայեցի, Աշխարհաժողով, աշխատասիրությամբ Բալդարյան Ս.-ի, Երևան, Մաշտոցի անվ. Մատենադարան հրատ., 2021, էջ 71):

Ըստ պատմագիր Հարություն Տեր-Հովհաննյանի՝ վանքի դպրոցում դասավանդել է վաճառական, վարդապետ, մանկավարժ Կոստանդ (նաև՝ Կոստանդին) Ջուղայեցին և «ունեցել է 250 աշակերտներ»[7]: Նրա վաճառականական և մանկավարժական գործունեությունը մեզ թույլ է տալիս նրան դասելու 17-րդ դարի հայ վաճառական-հեղինակների շարքին: Նրա՝ վաճառականության համար կազմած հայերեն առաջին ձեռնարկը՝ «Աշխարհաժողովը», դասավանդվել է ոչ միայն Ջուղայի դպրոցում, այլև, տարածվելով հայ վաճառականական ցանցում, դարձել է այս կենտրոնի հաջողության գրավականը:

Վանքի տպարանի անգործության մատնվելու հետևանքով «Աշխարհաժողով» դասագիրքը մնացել էր անտիպ, սակայն նրանից պահպանվել են 6 ձեռագիր ընդօրինակություններ: 2021 թվականին Սարգիս Բալդարյանի աշխատասիրությամբ առաջին անգամ լույս տեսավ «Վասն նորայյուս մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատը»[8]:

1. 3. ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Երրորդ ենթագլխում անդրադարձել ենք «Վասն նորայյուս մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատին» և ապա վերծանել և վերլուծել ենք «Աշխարհաժողով» մատյանում[9] տեղ գտած՝ Կոստանդի այլ գործեր:

Կոստանդ Ջուղայեցու մատյանը սկսվում է **«Վասն նորայյուս մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատ»** վերնագիրը կրող բաժնով, որտեղ ամփոփված են նրա՝ վաճառականական երկու ձեռնարկները՝ «Աշխարհաժողովը» և «Դռներն ռաղամին»: Դրանք դիտարկվում են որպես մեկ ընդհանուր աշխատություն՝ «Աշխարհաժողով» անունով, որոնցից առաջ գրված հիշատակարաններում նշվում է նույն տարեթիվը՝ 1687:

Նախատեսված լինելով ապագա վաճառականներին կրթելու համար՝ ձեռնարկը ժամանակի առևտրական աշխարհի մասին ամենակարևոր ու առձեռն տեղեկությունների մի ամբողջ հանրագիտարան է, որը պատմում է Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի տարբեր երկրների ու քաղաքների, գնվող և վաճառվող ապրանքների, դրանց գների, դրամական միավորների և այլ անհրաժեշտ առևտրական գիտելիքների մասին, որոնք լիովին բավարարում էին Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցի շուրջ միավորված հայ վաճառականների կարիքները և օգնում «նորայյուս» վաճառականներին մտնել առևտրական մեծ աշխարհ:

---

[7] **Տէր-Յովհաննեան Յարութիւն**, Պատմութիւն Նոր Ջուղայի, Ա և Բ հատորներ,Նոր Ջուղա, Ս. Ամենափրկիչ վանքի տպարան, 2008, էջ 586:

[8] **Կոստանդ Ջուղայեցի**, «Աշխարհաժողով», աշխատասիրությամբ Բալդարյան Ս.-ի, Երևան, Մաշտոցի անվ. Մատենադարան հրատ., 2021, Երևան, 2021:

[9] Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ Վանքի՝ Ս. Ներսես Շնորհալու անվ. մատենադարան, ձեռագիր թիվ 64:

Ձեռնարկի առաջին գնահատականը տալիս է գրքի առաջին բաժինը ընդօրինակած գրիչը, որը Կոստանդի աշակերտներից մեկն է, և առաջին հիշատակարանում գրում է. «Գրվեցաւ գիրքս այս արվեստին խիստ է բարի հիմանողին. դռներն է սայ ռաղամին, անհասանելի է ամենայնին, բաւական է այսքան շրջողին, միտքն բոլորվի ուսանողին»[10]):

Գիրքը, ինչպես վերնագիրն է հուշում, խրատական երկ է և, որպես միջնադարյան ժանրի օրինակ, ունի գեղարվեստական առանձնահատկություններ: Կրոնական-բարոյական խրատների կողքին Կոստանդ Ջուղայեցին սովորեցնում է վաճառական կյանքի սկզբունքները, որոնք հիմնականում սեփական փորձից ստացած դասեր են:

Մատյանում տեղ գտած գործերից ևս չորսը պատկանում են Կոստանդ Ջուղայեցու գրչին: Դրանցից առաջինը **«Հարցմունք և պատասխանի»**[11] վերնագրով բարոյախրատական արձակ մի երկ է, որը նույնպես գրված է միջնադարյան գրականության մեջ տարածված հարցուպատասխանի ժանրով: Երկը բովանդակային իմաստով գերազանցապես հիմնված է Աստվածաշնչի և հոգևոր գրականության ուսմունքների վրա, այն, ինչը հիմնականում կարդում ու սովորեցնում էին Վանքի դպրոցում: Կոստանդի երեք բանաստեղծությունները՝ «Կարդա մանուկ, ուսի սիրով», «Փառք քեզ Հայր երկնաւոր» և «Այբն Աստուծոյ է օրինակ», նույնպես խրատական կամ հոգևոր բովանդակություն ունեն:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ
2.1. ՍԻՐՈ ՄՈՏԻՎԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ (ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ, ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ)

Երկրորդ գլխում անդրադարձել ենք Նոր Ջուղայի հայ աշուղական դպրոցին, որն իր ծաղկման շրջանն ապրեց 17-րդ դարում և տևեց մինչև ուշ միջնադար: Այդ շրջանում է, որ հանդես են գալիս Ղուլ Էգազ, Ղուլ Արզունի, Բաղեր Օղլի և Ամիր Օղլի աշուղները, որոնք իրենց երգերով սկիզբ են դնում պարսկահայ աշուղական գրականությանը «և իրենց չոնգուրի լարերով յատուկ և որոշ ուղղություն տալիս պարսկահայ աշուղության»[12]:

Առաջին ենթագլխում «աշուղ» բառը ստուգաբանելուց հետո ներկայացրել ենք պարսկահայ աշուղների՝ սիրո թեմայով գրված տաղերը: 17-18-րդ դարերի աշուղ հեղինակների սիրային տաղերը հազվադեպ է, որ լինում են սյուժետային. Դրանք՝ որպես քնարական ստեղծագործություններ, հիմնականում փոխանցում են պարզ մարդկային հույզեր ու ապրումներ: Որպես կանոն ունենում են, այսպես ասած,

---

[10] Նույն տեղում, էջ 1-2:

[11] Նույն տեղում, էջ 501-554: Էջերի համարակալման մեջ թույլ է տրվել սխալ. 554-ի փոխարեն տե՛ս 454: Մատիտով համարակալված է՝ 252-279:

[12] **Երեմյան Ա. Գ.,** «Պարսկահայ նորագույն աշուղներ», Վենետիկ, Մխիթարեան Տպարան, 1925, էջ 5:

«ներածական մուտք». այն կնոջ արտաքին գեղեցկության նկարագրությունն է, ճոխ պատկերային կաղապարների միջոցով նրա գեղեցկության բացառիկության ընդգծումը, որը երբեմն հասնում է մարմներգության: Սա, անշուշտ, պայմանավորված է արևելյան, հատկապես՝ արաբական և պարսկական բանաստեղծական ձևերի և յուրահատկությունների պատճենումով, ինչն էլ առաջին հայացքից կարող է ստեղծել մտայնություն, թե այս շրջանի հեղինակների գործերում կա որոշակի միօրինակություն: Այստեղ դիտարկել ենք կլիշեների օգտագործումը տարբեր աշուղների մոտ՝ զուգահեռներ տանելով Սայաթ-Նովայի և պարսկահայ աշուղների տաղերի միջև:

Կնոջ արտաքին նկարագրությունից հետո, հույզերի դրսևորման մեջ ի հայտ է գալիս աշուղը: Ապրումների, նվիրումի, սիրո վայելքի, սպասման ու ցավի երգիչը՝ աշուղը, սկսում է արարել իրենը: Այստեղ արևելյան գունագեղ պատկերների նկարագրությունների թվացյալ նույնօրինակությունը վերանում է, և առաջին պլան մղվում սիրահար-աշուղի մենախոսությունը: Սակայն երբեմն որոշ աշուղների (Բաղեր Օղլի, Հարթուն Օղլի) գործերում այս մենախոսությունը փոխարկվում է երկխոսության, երբ կինը պատկեր-նկարագրությունից վերածվում է պատկեր-շարժումի, ստանում է ձայն ու բնավորություն՝ դառնալով աշուղական խաղի երկրորդ գործող անձը, դերակատարը:

Նոր Ջուղայի հայ աշուղները, իրանական տաղերգության լավագույն ավանդները ընդօրինակելով, կարողացան ստեղծել հայկականը՝ հիմք դնելով հայ աշուղական առաջին դպրոցին և իրենց կարևոր դերն ունեցան հայ աշուղական տաղերգության հետագա կայացման և զարգացման գործում:

2. 2. ԽՈՀԱԽՐԱՏԱԿԱՆ ՏԱՂԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՇԵՐՏԵՐԸ

Այստեղ անդրադարձել ենք պարսկահայ աշուղական երգերի տեսակներին, հայ աշուղի կերպարին և քննել խրատական տաղերի կանոնական և կենցաղային շերտերը:

Պարսկաստանի հայ աշուղները, հետևելով աշուղական տաղաչափական արվեստի օրինաչափությանը, օգտագործում էին բանաստեղծական նույն տեսակները, ինչպիսիք են բայաթին, ղուշման, մուխամասը, մուստազատը, դաստանը, գազելը և այլն: Նորջուղայեցի հայ աշուղները «հինգ, ութ, տասը, տասնմեկ վանկանի չափերով, քառատող, հնգատող և այլ տներով տաղեր էին հորինում, իսկ տների քանակը կախված էր տաղի բովանդակությունից. Լիրիկական, սիրային թեմաներով տաղերը ավելի կարճ, իսկ պատմական, կրոնական տաղերը ծավալուն էին»[13]:

Աշուղի ոչ սովորական, ծիսաառասպելական, գերմարդկային ու իմաստուն, հասարակության պատկառելի առաջնորդի կերպարը աղերս ուներ նաև կրոնի և

---

[13] **Մաթյան Ա.**, Սպահանի հայ աշուղների գրականությունը, «Պայման» հանդես, թիվ 40, 2007:. 1386 تابستان، سال دهم ، شماره 40 ، فصلنامه فرهنگی پیمان، ادبیات عاشق های ارمنی اصفهان، **آزاد ماتیان**
http://www.paymanonline.com/magazine.aspx?id=CFC1AB21-D571-4EC3-9379-ED0012AFF860

հավատի հետ: Հայերը սրբազան պաշտոն էին համարում աշուղությունը՝ այն կապելով Սուրբ Կարապետի զորության հետ: Օգտվելով իրենց համաժողովրդական կերպարից՝ Նոր Ջուղայի աշուղները ևս թափանցում էին ժողովրդի բոլոր շերտերը՝ քարոզելով կրոնական, ընտանեկան, հասարակական, համամարդկային արժեքներ՝ դրանով իսկ դառնալով Նոր Ջուղայի հիմնադրվող քաղաքակրթության առաջին ուսուցիչները: Պարսկահայ մի շարք աշուղներ, որպես գրական մականուն, սեփական անվանը կցում էին «ղուլ», նույնն է՝ «ղուլամ», այսինքն՝ «ծառա» մակդիրը: Աշուղ կոչվելուց և Սուրբ Կարապետ ուխտագնացությունից հետո նրանք նվիրվում էին սեփական ժողովրդին՝ ծառայելով նրա բարեկրթությանը:

Բարեկրթության իրենց քարոզը աշուղները անում էին խոհախրատական, ուսուցողական տաղերի միջոցով, որոնց գլխավոր շերտը կազմում էին կանոնական տաղերը: Պատերազմից, բռնագաղթից, սովից ու մահից փրկված պարսկահայ ժողովուրդը թոթափել էր իր հավատի ու արժեքների պաշարը, անհրաժեշտ էր վերանայել մարդկային, կրոնական ու ազգային բարոյախրատական ավանդները և մշակել նորերը՝ օտարության, օտար կրոնի ու մշակույթի տեր ժողովրդի մեջ պահպանելու սեփական նկարագիրը:

Մանուկ Աբեղյանը նկատել է, որ խրատական քերթվածները հիմնականում մնում են կրոնական պատկերացումների շրջանակներում և «տոգորված են քրիստոնեական բարոյական գաղափարներով, զբաղվում են կրոնական ուղղության խրատներով»[14]:

Այսպիսով, քրիստոնյա աշուղները դիմում են աղոթքի լեզվին՝ հայտնվելով հոգու ու մարմնի պայքարի, այսպես ասած, թատերաբեմում և շարունակում հյուսել մարմնականի ժխտման, հոգու վեհացման ու մաքրման՝ միջնադարյան բանաստեղծների կողմից կիրառվող գիծը: Քննում են ժամանակի մարդու խնդիրները և թվարկում նրա մեղքերը, որոնք, շղթայվելով իրար, ամբողջացնում են մեղավոր մարդու կերպարը: Ահավասիկ աշուղի մեջ արթնացնում է նարեկացիական «Ես ամենայնն և յիս ամենեցունն» սկզբունքին համարժեք մի գիտակցում, որի հետևանքով, բոլորի մեղքերն իր վրա զգալով, նա զղջում ապաշխարում և փորձում է մաքրվել դրանցից: **Խրատական կանոնական** տաղերը ուսուցանում են աստվածաշնչային դասեր, պատկերում հոգու և մարմնի, հոգևորի և աշխարհիկի հակադրությունը և հորդորում հրաժարվել վաղանցիկ նյութականից ու աշխարհիկից՝ խրախուսելով մարդուն ընթանալ բարիք գործելու և աստվածային էությանը մոտենալու ճանապարհով:

Կենցաղային խրատները Նոր Ջուղայի աշուղական դպրոցի խրատական տաղերի երկրորդ գլխավոր մասն են կազմում: Մահվան վկայակոչումը թերևս այն շրջադարձային կետն է, որ մարդուն ու հասարակությանը խրատող աշուղին հոգևոր հարցերի քննությունից տեղափոխում է ավելի առարկայական ու կենցաղային հարթություն: Ու որպեսզի նրա խրատը տեղ հասնի, որպեսզի մահվան վկայակոչումը իսկապես դառնա զգաստացնող, աշուղները սկսում են խոսել

[14] **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Դ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1970, էջ 343:

խոնարհության, արդարամտության, աղքատին ունեցածից բաժին հանելու, ճիշտ խոսելու, ճշմարտության հետևից գնալու, լավ ու իմաստուն մարդկանց հետ ընկերանալու, ընկերոջն ու բարեկամին նվիրվելու և նմանօրինակ մարդկային խրատներից:

Ինչպես նկատել է Հասմիկ Սահակյանը, Նոր Ջուղայի աշուղները «բոլորն էլ հատուկ կերպով շեշտում են աղքատներին օգնելու, ընկերասեր, մարդասեր լինելու անհրաժեշտությունը՝ այդ հարցում երբեմն հասնելով հայացքների զարմանալի լայնության՝ վեր կանգնելով կրոնական ու ազգային նախապաշարմունքներից»[15]: Սակայն ամենակենցաղային ու համամարդկային թեմաներում անգամ նորջուղայեցի աշուղը շարունակում է մնալ ազգային տիրույթում՝ հորինելով ազգային խրատական տաղեր: Այսպես օրինակ՝ Ղուլ Արզունիի խրատական տաղերում նրա ամենից անկեղծ վախերը, նրա ամենամեծ ցավերը կապված են սեփական ժողովրդի աղավաղված բարոյական նկարագրի հետ:

Պարսկահայ աշուղները, հայերենից բացի, նաև թուրքերեն, պարսկերեն, վրացերեն տաղեր էին հորինում, որպեսզի իրենց արվեստը ներկայացնեն այլ ժողովուրդներին: Իսկ նրանց կիրառած հայերենը հետաքրքիր խառնուրդ էր ինչպես Նոր Ջուղայի, Չահարմահալի, Փերիայի, Թիֆլիսի, Իստամբուլի բարբառների, այնպես էլ թուրքերենի, պարսկերենի և վրացերենի:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՏԱՂԵՐԳՈՒԹՅԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ
3.1. ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑՈՒ ՏԱՂԵՐԸ, ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՆ ՈՒ ԶՐՈՒՅՑ-ԲԱՆԱՎԵՃԵՐԸ

Երրորդ գլխի առաջին ենթագլխում ներկայացրել ենք նորջուղայեցի վաճառական, բանաստեղծ, հանելուկագիր, փիլիսոփա, երաժիշտ ու գեղանկարիչ Ստեփանոս Դաշտեցու տաղերը, հանելուկները և զրույց-բանավեճերը: Դաշտեցին ապրել ու գործել է 17-րդ դարի երկրորդ կեսում և 18-րդ դարի առաջին քառորդում: Նրա ստեղծած գրականությունը կարող ենք բաժանել երկու խմբի՝ ա) աստվածաբանական-վիճաբանական երկեր, բ) տաղեր: Հեղինակը առավելապես հայտնի է իր աստվածաբանական-վիճաբանական երկերով: Մինչդեռ նրա՝ գրական և հասարակական գործչի կերպարը թերի է առանց տաղերգության ուսումնասիրության:

Դաշտեցուց մեզ հասել են 17 տաղ՝ 5 երգիծական-պարսավական, 10 խրատական-իմաստասիրական, 1 պատմական և 1 հոգևոր: Բոլոր տաղերը ունեն մեկ հիմնական բովանդակային ընդհանրություն. իմաստասիրական բնույթի են, խրատաբարոյական միտվածության և ուղղված են նորջուղայեցիների

[15] Հայ աշուղներ.17-18-րդ դդ, կազմող և առաջաբանի հեղինակ՝ Սահակյան Հ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1961, էջ 35:

բարոյակրթությանը: Սիմոն Սիմոնյանը Դաշտեցու տաղերը բաժանում է երկու խմբի՝ **երգիծական-պարսավական** և **խրատական-իմաստասիրական**[16]:

Դաշտեցուց մեզ հասել են **երգիծական-պարսավական** հինգ տաղեր, որոնք հայ երգիծական գրականության չափածո հնագույն օրինակներից են: Նրանց մեջ աչքի է ընկնում խայթելու և սուր քննադատելու ոճը, որը տարածվում է նաև նրա բոլոր տաղերի վրա՝ դառնալով հեղինակի խոսքի առանձնահատկությունը. երգիծելու այս խառնվածքը հետևանքն է այն մթնոլորտի, որում ապրում էր Սպահանի հայությունը իր դարում: Այս արատն իսկական չարիք էր Նոր Ջուղայում ծաղկող ու բարգավաճող համայնքի համար: Հարստությամբ հղփացած վաճառականներից կազմված խավը ուներ բարոյական մոլորություններ, որոնց դեմ անզոր էին աստվածաբանական գրականությունն ու հոգևոր քարոզչությունը: Որտեղ ապարդյուն էր բարոյական խրատը, այնտեղ ազդու և համակշիռ զենք էր հեգնանքն ու սուր քննադատությունը, որտեղ որպես գեղարվեստական հնարքներ օգնության են հասնում չափազանցությունն ու հակադրությունը: Տաղասացը թվարկում է տարածված մոլորությունները՝ կեղծավորությունը, ժլատությունը, օտարասիրությունը, անգրագիտությունը, նախանձը:

Խոհախրատական-իմաստասիրական տաղերում ու քառյակներում են ավելի լայն արձագանք գտել ժամանակի պատմաքաղաքական իրադարձություններն ու հասարակական երևույթները: Դաշտեցին ցավով ու դառնությամբ նկատում էր, թե ինչ են բերում հասարակական նոր հարաբերությունները, ինչ արատներ են ծնվում, ինչպես են ապականվում բարքերը, ինչպես է աղճատվում մարդկային անհատը: Նրա տաղերը խորհրդածություններ են անմարդկային բարքերի շուրջ, որոնք այդչափ տարածում էին գտել իր հայրենակիցների մեջ և աղետալի հետևանքներ էին թողնում նրանց բարոյական նկարագրի վրա: Կյանքի ու մարդու արժեքների մի ամբողջ քննություն է ամփոփված նրա խոհախրատական գործերում: Հատկապես իր խրատական-իմաստասիրական տաղերը Դաշտեցին գրել է թաջնիս տաղաչափական ձևով:

Դաշտեցու խոհախրատական-իմաստասիրական տաղերում առկա է նաև երրորդ բովանդակային կողմը: Այնտեղ մասնավորապես աչքի է ընկնում **սիրո թեման**: Նրա սիրո քառյակները նման չեն ժամանակի մյուս սիրերգերին: Դրանցում չի հյուսվում հեղինակի սիրո պատմությունը, չի արվում սիրած աղջկա արտաքինի ամբողջական նկարագրությունը: Քառյակներից յուրաքանչյուրում ընթերցողը տեսնում է Դաշտեցու սիրո վեպի այս կամ այն պահը, ավելի ճիշտ՝ լսում նրա այս կամ այն ապրումի արձագանքը: Իսկ սիրո առարկայի արտաքինը նույնպես նկարագրվում է՝ թեթև վրձնահարվածներով միայն ուրվագծելով: Նա առավելապես տառապել է, քան վայելել իր ապրած սերը:

Նրա բազմաժանր ստեղծագործություններում **հանելուկները** փոքր տեղ են զբաղեցնում: Ներսես Շնորհալուց հետո հայ հեղինակները երբեմն դիմել են հանելուկի ժանրին, բայց ընդհանուր առմամբ այն բավականին մոռացված է եղել: Ուշ

---

[16] **Սիմոնեան Ս. ,** Նորայայտ տաղասաց մը Ստեփանոս Դաշտեցի, Պէյրութ, 1981, էջ 28:

միջնադարի հայ գրականության մեջ Ստեփանոս Դաշտեցու հանելուկները ուշագրավ են նրանով, որ հենց նա է երկարատև ընդմիջումից հետո շարունակել դասական հանելուկագրության ավանդույթը՝ որոշակի ձև ու բովանդակություն հաղորդելով ժանրին: Ստեփանոս Դաշտեցուց պահպանված հանելուկների շարքը բաղկացած է թվով քսան քառյակից և կրում է «Հանելուկ արարեալ ումեմնէ Ստեփաննոսէ Դաշտեցւոյ» վերնագիրը: Նրա հանելուկները վերաբերում են բնության երևույթներին կամ հայ կենցաղում ու վաճառականության կյանքում գործածության մեջ մտած առարկաներին ու իրերին: Գործածված պատկերներն ու համեմատությունները հաճախ շատ են առարկայական ու հասարակ, ինչ-որ չափով նաև՝ կոպիտ: Դաշտեցու հանելուկներում հանդիպող լեզվական այդ դրսևորումները արտացոլանքն են իր ներկայացրած հայ վաճառականության կենցաղի և միջավայրի:

Ստեփանոս Դաշտեցուց մեզ հասել են նաև յոթ **զրույց-բանավեճեր**[17], որոնք ի տարբերություն նրա մյուս արձակ աշխատությունների՝ արդեն հրատարակված են[18]: Բանավեճերի հիմնական նյութը քրիստոնեական և մահմեդական կրոնների փոխհարաբերության, դրանց ծեսերի ու սովորույթների հարցն է, սակայն, ինչպես վայել է գիտնական-փիլիսոփաներին, բանավեճի նպատակը իմաստասիրությունն ու ճանաչողությունն է. «Միայն իմաստասիրելոյ յաղագս է դիտաւորութիւն մեր»[19],- ասում է Դաշտեցին: Բանավիճող կողմերին հետաքրքրում էր տարբեր կրոնների միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները բացահայտելը:

Այդ շրջանում առևտրական տներն ու քարվանսարաները ինքնըստինքյան դառնում էին գիտամշակութային յուրահատուկ օջախներ, «չեզոք գոտիներ», որտեղ հանգրվանող տարբեր ազգության ու կրոնի մարդկանց շնորհիվ հանդիպում էին նաև տարբեր քաղաքակրթություններ, հավատալիքներ, մշակույթներ, բարքեր, սովորույթներ ու արժեքներ: Ստեղծագործական ձիրքով օժտված, հոգևոր կյանքը թողած ու վաճառական դարձած հեղինակի զրույց-բանավեճերը նրա ապրած ժամանակի իրականության յուրահատուկ արձանագրություններ են, կյանքի կարևոր իրադարձությունների գեղարվեստական վերարտադրության օրինակներ: Բոլոր զրույց-բանավեճերի կենտրոնում աշխարհիկ մարդն է՝ ժամանակի մարդու հավաքական կերպար դարձած վաճառականը: Հայ փիլիսոփայի զրույց-բանավեճերը հարուստ են հինկտակարանային մոտիվներով և ավետարանական վարդապետության մեկնություններով, որոնց միջոցով հեղինակը կատարում է

---

[17] Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության ձեռագրատուն, թիվ 346, էջ 187-255:

[18] Տե՛ս **Միրզոյան Հ.**-ի հետևեալ հոդվածները. 1.Ստեփանոս Դաշտեցու «զրույց-բանավեճերի» պատմամշակութային արժեքը, «Բանբեր Երևանի համալսարանի», հանդես, Եր., 1995, թիվ 3: 2.Ստեփանոս Դաշտեցու առաջին «զրույց-բանավեճը», «Բանբեր Երևանի համալսարանի», հանդես, Երևան, 1997, թիվ 3: 3. Ստեփանոս Դաշտեցու անտիպ «զրույց-բանավեճերը», «Բանբեր Երևանի համալսարանի», հանդես, 2009, թիվ 3:

[19] **Միրզոյան Հ.**, Ստ. Դաշտեցու «Զրույց-բանավեճերի» պատմամշակութային արժեքը, «Բանբեր Երևանի համալսարանի», հանդես, 1995, թիվ 3, էջ 107:

փիլիսոփայական, մարդաբանական ընդհանրացումներ: Դաշտեցու զրույց-բանավեճերը արժեքավոր են ոչ միայն իրենց արծարծած հարցերով, այլև՝ նրանով, որ բացառիկ աղբյուրներ են իրանահայ, 17-18-րդ դդ Իրանի քաղաքական ու գաղափարական մթնոլորտի, ինչպես նաև հայ-պարսկական մշակութային կապերի ու հասարակական հարաբերությունների ուսումնասիրության համար:

3. 2. ՍՏԵՓԱՆՈՍ ԵՐԵՑԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԳԻՐՔԸ

Երկրորդ ենթագլխում ներկայացրել ենք 18-րդ դարի պատմագիր, բանաստեղծ Ստեփանոս Երեցին և նրա «Հանգիտագիրքը»: Ստեփանոս Երեցը առավելապես հայտնի է որպես պատմագիր, սակայն նրանից մեզ հասել են նաև չորս այլ գրքույկներ՝ «Տաղարան», «Երգարան», «Շարադրանք», ևս մեկ «Տաղարան» որտեղ շարադրված են նրա բանաստեղծությունները: Չափածո ստեղծագործությունների մեծ մասը ներբողականներ են՝ եկեղեցու, սրբերի, առաջնորդի, հարազատների կամ այլ անհատների մասին գրված: Միանգամայն գերակշռող են հոգևոր թեմայով գործերը: Այս մասին Մինասյանը գրում է. «Որպես հոգևորական և խիստ հաւատացեալ քահանայ, խոր հիացմունք ունի դէպի կրօնն ու Հայ Լուսաւորչական եկեղեցին և նոյն ոգով էլ երևան է գալիս սուրբերին ու եկեղեցուն նուիրած իր բանաստեղծութիւններով ու ոտանաւորներով»[20]: Բանաստեղծությունների մյուս մասը կրոնական-եկեղեցական, զղջման-քավության տաղեր են, կանոնական ու կենցաղային խրատներ, հանելուկներ, խրախճանքի երգեր, ինչպես նաև՝ արձակ գործեր: Ունի նաև թուրքերեն, հայերեն-թուրքերեն կամ հայերեն-պարսկերեն բանաստեղծություններ: Այս գործերում նա առավելապես կրկնօրինակում է կրոնական գրքերի ոճը: Դրանք գեղարվեստական որևէ արժեք չեն ներկայացնում, գրված են պարզ լեզվով, հարուստ են ժողովրդական դարձվածքներով, արտացոլում են Նոր Ջուղայի ու Փերիայի հայ համայնքի կենցաղը ու մտածելակերպը, ուստի կարող են արժեքավոր աղբյուրներ լինել հայ ազգագրության համար:

Ստեփանոս Երեցի ամենից արժեքավոր գործը նրա **«Հանգիտագիրք»** անունով պատմագիրքն է: Այն ընդգրկում է Պարսկաստանում 1665-1789 թթ. ընկած ժամանակահատվածը, այն է՝ Սեֆյան հարստության Շահ Աբաս Բ.-ի (1642-1666 թթ.) կառավարման վերջին տարուց մինչև Մուհամմադ խանի և Լոթֆալի խանի ժամանակները: «Պատմագրքում» նկարագրված են 17-18-րդ դարերի Պարսկաստանում ծավալվող դեպքերը և հայկական համայնքների՝ հատկապես Նոր Ջուղայի և Փերիայի հայությանը վերաբերող կարևոր իրադարձությունները, դառն ու տխուր ժամանակներում տարբեր բռնավորների ճնշումների տակ գոյության պայքար մղող հրանահայության կյանքը: «Հանգիտագրքի» բնագիր օրինակը՝ 488 էջանոց կաշեկազմ մատյանը, գտնվում է Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի «Սբ. Ներսես Շնորհալի» գրադարան-մատենադարանում[21]:

---

[20] **Մինասեան Լ.**, Պատմագիր Ստեփաննոս Երէց, Թեհրան, Մոդերն տպարան., 1956, էջ 31:

[21] Տե՛ս Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ Վանքի՝ Ս. Ներսես Շնորհալու անվ. մատենադարան, ձեռագիր թիվ 654:

«Գիրք, որ կոչի Հանգիտագիրք, որ է մտածմունք ժամանակաց՝ անցելոց և ներկայից»[22]. այսպես է պատմիչը գրքի տիտղոսաթերթում բնութագրում իր շարադրած պատմությունը: Թեև «Պատմագիրքը» բևեռված է իրանահայ համայնքի կյանքի վրա, ներկայացնում է նրա հետ առնչվող պատմական իրադարձությունները, ավանդություններն ու սովորությունները, սակայն միաժամանակ պատմում է Իրանի թագավորների ու արքունական գահի համար մղվող կռիվների մասին:

«Ստեփանոս Երեցի «Պատմագիրքը» սկզբից մինչև վերջ շաղախված է արցունքով»[23]: Բայբուրդյանի այս ձևակերպումը գրքի էության հստակ ու պատկերավոր բնութագրումն է: Դեպքերին ժամանակակից ու հաճախ նաև ականատես հեղինակը մանրամասնորեն ու նրբությամբ է կերտում տարբեր բռնակալների կողմից հալածանքների, հարձակումների, կողոպուտների, հափշտակությունների ենթարկված, ինչպես նաև սովի ու զանազան արհավիրքների միջով անցնող իր ժողովրդի ցավերի ու տառապանքների նկարագրությունը, որոնք չափելիս երբեմն հասնում է գեղարվեստական պատկերավորման. . «. . . թէ ծովն ովկիանոս մելան եղեալ էր, և ամենայն շամբս եղեգեան՝ կածեն, և դաշտն արաբացոց՝ քարտէս, ոչ բաւ էին՝ առ ի շարազուքել զորքանութիւն նեղութեանցըն:»[24] Պատմագիրը ներկայանում է որպես գեղարվեստական կերպար, ով իր մեջ խտացնում է պարսկահայ համայնքի ապրումներն ու ցավերը, և իր մտածողությամբ ու վերլուծություններով ամբողջացնում է երկը: Պատումները շարադրելիս Ստեփանոս Երեցը մեծ տուրք է տվել կրոնական մտածողությանը և աստվածային նախասահմանվածությանը: «Պատմագրքի» լեզուն գրաբարն է, որը շատ մոտ է աշխարհաբարին: 17-18 դարերում Իրանի հայ գաղթաշխարհում տիրապետող գրական լեզուն գրաբարախառն աշխարհաբարն էր, սակայն լինելով հոգևորական՝ պատմագիրը նախապատվությունը տվել է գրաբարին: Այս ամենով նրա շարադրանքը աչքի է ընկնում պարզ ու պատկերավոր ոճով, համեմատություններն ու մակդիրները հարստացնում են լեզուն, իսկ ժողովրդական դարձվածքներն ու Փերիայի հայերի բարբառային բառերը առանձնակի կենդանություն են տալիս երկին:

Ստեփանոս Երեցը հետազոտել և ըմբռնել է ժամանակի ոգին: Մշտապես կանգնած լինելով հարազատ ժողովրդի կողքին՝ նրա հետ միասին ապրել է դարի ողջ դառնությունը, բարեխղճորեն արձանագրել այն և գուշակել ապագան:

---

[22] **Ստեփանոս Երեց**, Հանգիտագիրք, Թեհրան, «Ալիք» հրատ., 2017, էջ 6:

[23] **Բայբուրդյան Վ.** , Ստեփանոս Երեց Տերտերյանի «Պատմագիրքը»՝ որպես սկզբնաղբյուր XVII-XVIII դարերի Իրանի և իրանահայության պատմության, ԵՊՀ հրատ., Եր., 2020, էջ 26:

[24] Նույն տեղում, էջ 137:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր ուսումնասիրությունը կատարել ենք պատմահամեմատական, վերլուծական, համադրական մեթոդների միասնական գործադրմամբ և արդիական դիտարկումների համադրությամբ: Առաջադրված հիմնախնդրի համակողմանի քննությամբ ձեռք բերված արդյունքները ներկայացնում ենք հետևյալ եզրակացություններով.

1. Ընդունված է մտածել, որ հայ կյանքի զարթոնքը 17-րդ դարում պայմանավորված էր Նոր Ջուղայում գրչագրության և տպագրության գործի հաջողությամբ, բայց մեր աշխատանքի ընթացքում եկել ենք այն համոզման, որ հոգևորականությունից բացի մեծ դերակատարություն է ունեցել նաև վաճառականությունը՝ ուղղակի կամ անուղղակի կերպով լինելով հայ գրքի ստեղծման հովանավորն ու տարածողը: Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքում հիմնադրված Իրանի և ողջ Միջին Արևելքի առաջին տպարանը, ձեռնամուխ լինելով հոգևոր գրականության տպագրությանը, հետապնդում էր ոչ միայն լուսավորություն տարածելու, այլև դավանաբանական քարոզչության նպատակ:

2. Քննելով Սբ. Ամենափրկիչ վանքի վաճառականական դպրոցի ուսուցիչ և հայերեն առաջին վաճառականական ձեռնարկի հեղինակ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով» մատյանը՝ եզրահանգել ենք, որ գրքում տեղ գտած նրա հեղինակային ստեղծագործություններից գլխավորը՝ «Վասն նորայյուս մանկանց և երիտասարդաց վաճառականաց խրատը», խրատական երկ է և որպես միջնադարյան ժանրի օրինակ՝ ունի գեղարվեստական առանձնահատկություններ: Նրա մյուս գործերը նույնպես հոգևոր ու աշխարհիկ բովանդակությամբ խրատական շարքեր են, որոնք թեև գեղարվեստական մեծ արժեք չեն ներկայացնում, սակայն զետեղում են ժամանակի կյանքի ու կենցաղի մասին արժեքավոր տեղեկություններ:

3. Ուսումնասիրելով Նոր Ջուղայի աշուղական դպրոցը՝ եզրակացրել ենք, որ նրա միջոցով են արևելյան տաղերգության և աշուղության ավանդները ներմուծվել հայ գրականություն: Հատկանշական է, որ պարսկահայ աշուղները ստեղծում են ինքնատիպ պատկերներ, կաղապարներին տալիս անհատական երանգ և իրենց տաղերը համեմում հայկական ժողովրդական հոգեբանությամբ ու մտածողությամբ:

4. Պարսկահայ աշուղների երգերում առանցքային տեղ ունեն սիրային ստեղծագործությունները, որտեղ աստիճանաբար ուրվագծվում և ամբողջանում է աշուղի կերպարն ու բուն գործառույթը, այն է՝ «սիրահար երգիչ»: Այստեղ արևելյան գունագեղ նկարագրությունների և սիրո պատկերային կաղապարների միջոցով գծագրված կինը ժամանակի ընթացքում կենդանանում է, բնավորություն ու ձայն ստանում՝ ի վերջո կերպավորվելով որպես ակտիվ դերակատար: Գեղարվեստական պատկերներ ստեղծելու ինքնատիպությամբ աչքի են ընկնում Ղուլ Հովհաննեսը, Հարթուն Օղլին, Ղուլ Էգազը և Բաղեր Օղլին:

5. Աշուղական խրատական տաղերը միտված են փրկելու ջուղայահայության՝ պատերազմի, բռնագաղթի ու սովի հետևանքով վտանգված բարոյական նկարագիրը: Պարսկահայ աշուղները կանոնական ու կենցաղային տաղերի միջոցով վերամշակում են կրոնական ու ազգային արժեհամակարգը: Նրանց տաղերում

մարդն արժևորվում է իր իմաստնությամբ, մարդկային ու բարոյական հատկանիշներով, ազգային նկարագրին հավատարիմ մնալու պատրաստակամությամբ:

6. Վաճառական բանաստեղծ Ստեփանոս Դաշտեցու ստեղծագործությունների քննությամբ հանգել ենք այն եզրակացության, որ նրա տաղերում ձևով ու բովանդակությամբ առանձնանում են խրատական-իմաստասիրական գործերը, որտեղ հեղինակը երգիծելով ու պարսավելով փորձում է շտկել հասարակության մեջ տարածված մոլորությունները՝ սահմանելով բարոյագիտության նորմեր: Մինչդեռ նրա սիրային երգերը պարզապես կրկնում են միջնադարյան տաղերգության կաղապարները:

7. Ստեփանոս Դաշտեցին Ներսես Շնորհալուց հետո դիմում է արդեն բավական ժամանակ մոռացության մատնված հանելուկագրության ժանրին՝ կենցաղային ու գիտական նորություններին վերաբերող հանելուկներ հորինելով վաճառականների համար:

8. Դաշտեցու զրույց-բանավեճերը՝ ոչ միայն 17-18-րդ դդ Պարսկաստանի հասարակական-քաղաքական, գաղափարական-մշակութային մթնոլորտի, այլև առևտրական տներում ու քարվանսարաներում տարբեր քաղաքակրթությունների, ազգերի ու կրոնների բախման արդյունքում ստեղծված գիտամշակութային յուրատեսակ միջավայրի արտացոլանքն են: Բոլոր բանավեճերի կենտրոնում աշխարհիկ մարդն է՝ վաճառականը, ով սեփական բանականությամբ կռվում է իր մեղավոր էության դեմ:

9. 18-րդ դարի պատմագիր Ստեփանոս Երեցը իր «Հանգիտագիրք» երկում շարունակում է դասական պատմագրության ավանդները: Նրա պատմությունը ներկայացնում է 17-18-րդ դարերի Պարսկաստանում ծավալվող դեպքերը, հայությանը վերաբերող կարևոր իրադարձությունները, տարբեր բռնակալների ճնշումների տակ թուլացող հայ կյանքը: Երկի ուսումնասիրությամբ եկել ենք այն եզրակացության, որ դեպքերին ժամանակակից ու հաճախ նաև ականատես պատմագիրը, ներկայանալով որպես ցավը մարմնավորող կերպար, կարողացել է կենդանի շունչ հաղորդել իր պատմությանը՝ այն օժտելով գեղարվեստական, ժանրային և ոճական հիմնական հատկանիշներով:

10. Աշխատանքի ընթացքում հնարավորինս անդրադարձել ենք տարբեր թեմաների ու ժանրերի՝ առաջադրված թեմայի շրջանակներում ընթերցողին քիչ թե շատ ամբողջական պատկերացում տալու համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ.

1. **Բողոզյան Ս.,** «Սիրո մոտիվը Նոր Ջուղայի աշուղական դպրոցում. դրսևորման ձևերը, պատկերային կաղապարները» // «Վէմ», համահայկական հանդես, ապրիլ-հունիս, թիվ 2 (62), Երևան, 2018, էջ 74-91:
2. **Բողոզյան Ս.,** «Խոհախրատական տաղերը Նոր Ջուղայի աշուղական դպրոցում» // «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան, 2018, էջ 424-434:
3. **Բողոզյան Ս.,** «Ստեփանոս Դաշտեցու հանելուկները» // «Հայագիտության հարցեր», հանդես, թիվ 3 (24), Երևան, 2021, էջ 139-148:
4. **Բողոզյան Ս.,** «Տաղասաց Ստեփանոս Դաշտեցին» // «Վէմ», համահայկական հանդես, թիվ 4 (76), Երևան, 2021, էջ 196-211:
5. **Բողոզյան Ս.,** «Սբ. Ամենափրկիչ վանքի դպրոցը և Կոստանդ Ջուղայեցու դասագիրք մատյանը» // «Գրականագիտական հանդես», թիվ 1 (ԻԴ), Երևան, 2022, էջ 188-207:
6. **Բողոզյան Ս.,** «Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի գրչագրության և տպագրության ոսկեդարը» // «Դպրատուն», հասարակական գիտությունների հանդես, 2 (14), Ստեփանակերտ, 2022, էջ 59-67:

СОСЕ БОГОЗЯН

ЛИТЕРАТУРНАЯ И КУЛЬТУРНАЯ ЖИЗНЬ НОВОЙ ДЖУЛЬФЫ В XVII-XVIII ВВ.

Защита диссертации на соискание ученой степени кандидата филологических наук состоится 15-ого маяа 2024 года в 14:30 на заседании специализированного совета 012 ВАК («Армянская средневековая и современная литература»), действующего в Ереванском государственном университете, по адресу 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52а (восьмой корпус ЕГУ, факультет армянской филологии, аудитория 202).

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования. Неоспорим вклад Новой Джульфы в историю армянской литературы и культуры. В новое время опыт возрождения этого поселения является примером как для Диаспоры, так и для Армении. В литературоведении, за исключением отдельных случаев, не уделялось должного внимания авторам и деятелям из Новой Джульфы. Такими авторами являются Костанд Джугаеци, Степанос Даштеци, Степанос Ерец и проживавшие в Иране армянские ашуги. Изучение указанных тем и авторов обогатит страницы истории литературы позднего Средневековья; исследование выдвинутых указанными авторами духовных, общечеловеческих и национальных вопросов еще раз подтвердит с позиций времени актуальность ценностей прошлого.

Цели и задачи исследования. Цель представленного исследования - изучить литературно-культурное возрождение Новой Джульфы в XVII-XVIII вв., а также оценить вклад и показать место Новой Джульфы в истории армянской литературы. Нами представлены обстоятельства основания этого поселения, описана и проанализирована общественно-историческая и культурная атмосфера в указанный период, рассмотрена роль рукописного искусства, книгопечатания, монастыря Сурб Аменапркич, его школы и купечества в армянской действительности. Нами также исследована армянская литература Ирана того же периода, в частности армянская литература Новой Джульфы, начиная с ашугской школы. Мы представили произведение «Ашхаражохов» купца и педагога Костанда Джугаеци, загадки, беседы-диспуты и поэтические произведения купца и поэта Степаноса Даштеци и книгу «Ангитагирк» историка XVIII в. Степаноса Ереца.

Научная новизна диссертации. Высоко оценивая имеющиеся источники, связанные с разными эпизодами материала диссертации, которые помогли нам сориентироваться в изучении этой обширной темы, мы должны, однако, указать на недостаток литературоведческих источников по исследуемым произведениям.

В работе нами всесторонне представлены литературно-культурные явления, послужившие стимулом для становления Новой Джульфы. Сосредоточив внимание на определенных литературных явлениях, авторах и произведениях, мы стремились представить вместе взятые искусство ашугов, поэзию и историографию Новой

Джульфы, чтобы можно было должным образом оценить их с применением синхронного и диахронного подходов. Здесь еще многое нужно сделать, и требуются отдельные исследования.

Методика исследования. С использованием сравнительно-исторического, аналитического и сопоставительного методов нами представлена литературно-культурная и общественная среда Новой Джульфы и в соответствии с логикой сложившихся обстоятельств раскрыт вклад Новой Джульфы в армянский мир XVII-XVIII вв., который переосмыслен с учетом современной системы ценностей. Посредством проведения сравнения и исследования времени и условий нами произведена оценка вклада армянских ашугов Ирана. Нами также исследована рукопись и расшифрованы стихотворные строки из книги Костанда Джугаеци «Ашхаражохов».

Структура диссертации. Работа состоит из введения, трех глав, заключения, словаря и списка использованной литературы, где указаны использованные источники, периодические издания, рукописи и интернет-ссылки.

Во введении представлен период, в который была основана и пережила литературно-культурный подъем Новая Джульфа. В рамках темы нами выделены пласты, выступившие в качестве предмета исследования, затем рассмотрена степень их изученности. После краткого изложения цели и задач диссертации разъяснена актуальность темы и подчеркнута ее научная новизна.

В первой главе ("СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНАЯ СРЕДА НОВОЙ ДЖУЛЬФЫ") нами изображена общественная и культурная жизнь Новой Джульфы в XVII-XVIII вв. и представлены обстоятельства, вдохнувшие жизнь в это поселение в начале XVII в. и ставшие причиной его развития и расцвета.

В трех параграфах представлены рукописное искусство и книгопечатание в Новой Джульфе, школа монастыря Сурб Аменапркич, купеческая школа, учитель той же школы и автор первого армянского учебника по коммерции Костанд Джугаеци, его книга «Ашхаражохов», в которой размещены также и стихи автора.

Во второй главе («АРМЯНСКАЯ АШУГСКАЯ ШКОЛА НОВОЙ ДЖУЛЬФЫ») рассмотрена армянская ашугская школа Новой Джульфы, расцвет которой пришелся на XVII в. и продлился до XVIII в. В двух параграфах главы проанализированы любовные и назидательные стихи армянских ашугов Ирана.

В третьей главе («СТРАНИЦЫ ПОЭЗИИ И ИСТОРИОГРАФИИ»), которая разделена на два параграфа, представлены стихи, загадки и беседы-диспуты купца, поэта, автора загадок, философа из Новой Джульфы Степаноса Даштеци, а также историк и поэт XVIII в. Степанос Ереци и его произведение «Ангистагирк».

В заключении подведены итоги исследования и обобщены существенные положения рассматриваемых материалов.

В словаре разъяснены все диалектные и иностранные слова, встречающиеся в цитатах из оригиналов.

Общий объем диссертации составляет 136 страницы.

SOSEH BOGHOZIAN

LITERARY AND CULTURAL LIFE OF NOR JUGHA (NEW JULFA) IN XVII-XVIII CENTURIES

The defense of the thesis will take place on May 15, 2024 at 14:30 at the HQC of RA's specialized council 012 of "Armenian Medieval and Modern Literature" in Yerevan State University (address: 0025, Yerevan, Abovyan st. 52/A, YSU, 8th building, Faculty of Armenian Philology, room 202)

SUMMARY

The modernity of the theme: The contribution of Nor Jugha (New Julfa) to the history of Armenian literature and culture is indisputable. In modern times, the experience of the revival of this settlement is an example for both the Diaspora and Armenia. In literary criticism, with the exception of individual cases, due attention was not paid to the authors and figures from New Julfa. Such authors are Kostand Jughaetsi, Stepanos Dashtetsi, Stepanos Yerets and the Armenian ashughs living in Iran. The study of the indicated topics and authors will enrich the pages of the history of literature of the late Middle Ages; the study of the spiritual, universal and national issues advanced by the indicated authors will once again confirm the relevance of the values of the past from the standpoint of time.

The aims and problems of the research: The purpose of the presented research is to study the literary and cultural revival of New Julfa in XVII-XVIII centuries, as well as to evaluate the contribution and show the place of New Julfa in the history of the Armenian literature. We have presented the circumstances of the founding of this settlement, described and analyzed the socio-historical and cultural atmosphere in the indicated period, considered the role of handwritten art, typography, the Surb Amenaprkich monastery, its school and merchants in the Armenian reality. We have also studied the Armenian literature of Iran of the same period, in particular, the Armenian literature of New Julfa, starting from the ashugh school. We have presented the work "Ashkharhazhohov" by merchant and teacher Kostand Jughaetsi, riddles, disputes-discussions and poetic works of merchant and poet Stepanos Dashtetsi, and the book "Angitagirk" by historian of XVIII century Stepanos Yerets.

The scientific novelty of the thesis: Highly appreciating the available sources related to the various episodes of the thesis material, which helped us orient in the study of this vast topic, we should, however, point out the lack of literary sources on the studied works.

In our work, we have comprehensively presented the literary and cultural phenomena that served as an incentive for the formation of New Julfa. By focusing on certain literary phenomena, authors and works, we have strived to present the combined art of the ashughs, poetry and historiography of New Julfa so that they could be properly

assessed using synchronic and diachronic approaches. There is still a lot to be done here, and separate studies are required.

The methodology of the work: Using comparative and historical, analytical and comparative methods, we have presented the literary, cultural and social environment of New Julfa and, in accordance with the logic of the current circumstances, we have revealed the contribution of New Julfa to the Armenian world of XVII-XVIII centuries, which is rethought taking into account the modern system of values. Through the comparison and study of time and conditions, we have assessed the contribution of the Armenian ashughs of Iran. We have also examined the manuscript and deciphered the poetic lines from the book "Ashkharhazhokhov" by Kostand Jughaetsi

The structure of the thesis: The work consists of an Introduction, three Chapters, a Conclusion, a Dictionary and a List of References, which indicate the used sources, periodicals, manuscripts and Internet links.

The Introduction presents the period in which New Julfa was founded and experienced the literary and cultural rise. Within the framework of the topic, we have outlined the layers that acted as a subject of the research, then considered the degree of their knowledge. After a brief presentation of the purpose and objectives of the thesis, the relevance of the topic has been explained and its scientific novelty has been emphasized.

In the first Chapter ("SOCIO-CULTURAL ENVIRONMENT OF NEW JULFA") we have depicted the social and cultural life of New Julfa in XVII-XVIII centuries and have presented the circumstances that breathed life into this settlement at the beginning of XVII century and became the reason for its development and flourishing.

Three paragraphs present handwritten art and typography in New Julfa, the school of the Surb Amenaprkich Monastery, the merchant school, the teacher of the same school and the author of the first Armenian manual on commerce Kostand Jughaetsi, his book "Ashkharhazhokhov", which also contains the author's poems.

The second Chapter ("ARMENIAN ASHUGH SCHOOL OF NEW JULFA") considers the Armenian ashugh school of New Julfa, which flourished in XVII century and lasted until XVIII century. Love and edifying verses of the Armenian ashughs of Iran have been analyzed in two paragraphs of the Chapter.

The third Chapter ("PAGES OF POETRY AND HISTORIOGRAPHY"), which is divided into two paragraphs, has presented poems, riddles and discussions of the merchant, poet, author of riddles, philosopher from New Julfa Stepanos Dashtetsi, as well as the historian and poet of XVIII century Stepanos Yerets and his work "Hangistagirk".

In the Conclusion, the results of the study have been summed up and the essential provisions of the considered materials have been summarized.

The Dictionary has explained all the dialect and foreign words found in quotations from the originals.

The total volume of the thesis comprises 136 pages.